

Ըուշանին ի գիրկ
 Յօղեալ անուշիկ,
 Օ որ շիթ առ շիթ թափէ այգուն,
 Ա. Յ յիշատակն եւ քաղցրութիւն են
 {մինայուն: —
 Երդեօք ի սփիւռը բընութեան
 Բզմից իցէք դուք թարգման.
 Եթէ ի ձեր դաշնակ անմեղ
 Ա երառնու Տէր ի բնութենէ զձեռն
 {իւր աչեղ,
 Յարփւոյն օթոց մինչ լուսալիր
 Դայ ի վանել այգուն զերկիր.
 Թաէ ըզկարիս տիեզերաց
 "Դ առաւօտինըս ըղերձէք ձայն մաղ
 (Կ ն փոյթ յաղերս, թըռչնեկիկք,
 Եւ փափկագոյն մընթեսնիք.
 Տէր, դու նիրհելցն,
 Տացես արթնութիւն.
 Կ կանն արեւու
 Բզող լուսատու,
 Եւ ընդ ամէն բիբ
 Դար ըզնորուն տիպ.
 Տուր հանուրց հագագ
 Բարբառ ներդաշնակ,
 Օ անգակին ըզգանգ,
 Յանձաւս արձագանգ,
 Ոստոց շըշընթիւն,
 Եւ հողմոց հընդիւն.
 Պետոց տուր հոսանս,
 Օսվուն ըզբօսանս,
 Յառագաստն հողմիկ,
 Եւ ցանցին որսիկ:
 Կ նդաստանաց տուր
 Եւ խաշին ըզջուր,
 Ո՞ի պերձ սահանաց
 Դիցես ընպառուած.
 Օստոյն տուր սաղարթ
 Եւ թուրումն ի վարդ,
 Թայր ի մանուշակ
 Եւ ջուր անուշակ.
 Յորենին ըզիստ
 Եւ բըլոց ըզնիստ,
 Օչմակին ըստուեր
 Եւ բոց ի լսատեր:
 Ո՞ի թողուր ըզբոյն
 Կ նձայն ընդ այգուն,
 Դիւղին՝ հանգոյն տան


Երկ հիմն անտատան .
 Տուր եւ առ մանկիկ
 Ռիչ, նինջ անուշիկ .
 Եւ ի ստինս անդ մօր
 Կաթըն մեղրածոր:
 Տուր, Տէր ... այլ ո՞չ թըռչնեկիկք,
 Ո՞ի եւ զայս գողտոր ի դայլայլիկ ...
 Թաղէք զի սիրտ հեծէ այժմիկ .
 Տուր Տէր եւ որբոյն
 Օ ըսփոփանս այգոյն,
 Տուր արտօսր աշաց
 Պնացս՝ սրտին առուաց .
 Տուր թեւս ի նորուն
 Կ նմնունչ հեծութիւն,
 Օ ի առ քո գահոյս
 Թափիցէ մեծայոյս,
 Ո՞ինչ սիրտն եւ միտք անմեկին
 Եւ սընարաւ հըսկէ շիրմին:
 Հ. Ի. Գ.

—

ԱՃԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Պրիսելի Հասարակաց ժողովարանը :

Պելճիոյ տէրութեն քաղաքները զրե-
 թէ ամենքն ալճոխ ու հոյակապ շէնքե-
 րով զարդարուած են, որոնց մէջ ամե-
 նէն աւելի ճոխ և մեծաշէն քաղաքն է
 Պրիսել, որ աս գեղեցիկ երկրիս մայրա-
 քաղաքն է, և ինչ որ մայրաքաղաքի մը
 զարդ կրնաց ըլլալիր մէջը բովանդակած
 ունի: Պրիսելի պատմութեն մէջ զար-
 մանալի յարմարութիւն մըն ալ կը նշա-
 նակեն եօնը թուոյն վրայ: Պ տէնօք այս
 մայրաքաղաքս եօնը փառաւոր պալատ
 ունէր, որոնք եօնը երեկիլի ազնուական
 ցեղերու էին, որ տէրութեան մէջ մեծ
 ազգեցութիւն ունէին . նոյնպէս եօնը
 մեծ հրապարակ կը գտնուին աս քաղ-
 քիս մէջ ու իրեք անգամ եօնը աղբիւր .
 և եօնը զլիսաւոր դուռ ունի: Ա էն գե-
 տին ակունքը քաղքէն եօնը մղոն հե-
 ռու կը բղիսէ . նոյնպէս եօնը հատ են
 քաղքին գլխաւոր հոյակապ եկեղեցի-
 ները, որոնք նոյնչափ ալ ժողովրդապե-
 տութիւն կը բաժնեն զքաղաքը . և զար-
 մանալի դիպուած մ'ալ կը պատմուի,



Պրիւսելի Հասարակաց ժողովարանը :

որ հին ալքունի պալատը Էօթը թագաւորաց իջևան եղած է, որոնց անուանց ցուցակն ալ նկատելու արժանի է. Իշխոլս Ե. իր որդին Փիլիպպոս Բ., որ նոյն ատենը՝ Ահապօլսոյ թագաւոր էր. Աքսիմիլիանոս Պոհեմիոյ թագաւորը, Անկարիոյ թագուհին, Դառնուզի թագաւորը, Ախլոսի թագաւորը և Երուսաղեմայ թագուհին:

Տայյ աս պալատս որ շատ հին շենք

էր, 1731^{ին} մեծ հրդեհ մը պատահէ. լով բոլորովին այրեցաւ, ուրիշ շատ երեխի շենքերով մէկտեղ. որոնց կարգի է նաև քաղքիս Հասարակաց ժողովարանը, որ նոյն հրդեհին միջոցը ըստ բաղդի ազատելով ինչուան հիմա կանգուն կեցած է:

Այս շենքս մեծ հրապարակին վրա է և հիմը 1380^{ին} գրուած է և բոլոր վին լմնցած է 1442^{ին}, բայց այսչափ մի

ջոցին մէջ, մանաւանդ սկզբան 20 տարիի չափ գործքին շինութիւնը 'ի կախ մասցած է : Ինչպէս որ պատկերին մէջն կը տեսնուի, աս շէնքս ընդարձակ քառակուսի կրկնայարկ պալատ մի է և երդիքը բոլոր շէնքին բարձրութեանը չորրորդ մասն է : || Եջ տեղը մեծ դրան շարունակութեամբը գոթացի ոճով աշտարակ մը կը բարձրանայ շատ գեղեցիկ ու զարդարուն ճարտարապետութեամբ . բարձրութիւնն է 364 ոտք, ուսկից մէկ նայուածքով բոլոր քաղքին ու շրջակայ դաշտորէից հիանալի տեսարանը կը տեսնես :

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԲՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Զերմորիսն¹ :

|| Սան ու ՞ Երմութիւնը այնչափ իրարու հետ միացեալ են, որ շատ բնաբանք կը սեպէն որ ջերմութիւնն ու լցուը կրակին երկու այլ և այլ աստիճաններն են : || Ենք զանց կ'առնենք այն խնդիրը՝ թէ արդեօք իրապէս երկու զատ զատ ազդեցութիւն ունեցող սկզբունքներ են այս լցուն ու ջերմութիւնը . բայց շատ անգամ կը տեսնենք որ ջերմութիւնը լուսէն կը բաժնուի . ինչպէս որ ՞ էրշելի հետաքրքրական փորձերէն մէկն ալ յայտնի կը ցուցընէ : ՞ էրշելքննեց տեսաւ՝ որ երբոր ջերմութիւնն ու լցուը արեւուն ճառագայթներէն առաջ գան, ջերմութիւնը լուսէն աւելի քիչ բեկրեկմունք կը կրէ : || ասն զի երբոր հատուածակողմանվ գունաւոր ճառագայթները իրարմէ բաժնեց, տեսաւ որ տաքութեան աւելի բարձր աստի-

ճանը գունաւոր պատկերէն անդին ինկաւ, կարմիր ճառագայթներէն քիչ մը հեռու . և գիտենք որ կարմիր ճառագայթները ուրիշ ամէն ճառագայթներէն աւելի քիչ բեկրեկմունք կը կրեն, որ է ըսելիրէնց ուղղութենէն շատ չեն խոտորիք : || յս փորձը շատ գժուարին փորձերէն է . վասն զի այնչափ կատարեալ պիտի ըլլայ ջերմաչափը, որ իմացուի թէ ջերմութեան ինչ տարբերութիւն կ'ըլլայ գունաւոր պատկերին մէջ և անկէց դուրս . վասն զի պիտի զիտնանք որ ջերմութիւնը բոլորովին լուսէն զատուած չէ . վասն զի ամէն գունաւոր ճառագայթներն ալ մէյմէկ քիչ ջերմութիւն ունին . միայն բոլոր ջերմութիւնն ալ այնպէս ցրեկրեկիր՝ որ գունաւոր պատկերին վրայ բաժնուած ըլլայ : || յս փորձը տեսնալէն ետեւ կրնանք ըսել թէ ջերմութիւնը լուսոյ մէկ հանգամանքն է : Շայց ՚ի վերայ այսը ամենայնի դեռ ոչ մէկ կողմը և ոչ մէկալ կողմը կրնայ հաստատուիլ . ոչ թէ ջերմութիւնն ու լցուը զատ զատ բաներ են, և ոչ թէ ջերմութիւնը լուսոյն մէկ հանգամանքն է : Ուկետ և ՞ էլլոնի խոալացի բնաբանին ջերմութեան վրայ ըրած գեղեցիկ ու հանձնարաւոր փորձերը շատ բնաբաններ համոզեցին ըսելու թէ երկու այլ և այլ բաներ են :

Կան գոյացութիւններ որ լցուը անցողական կերպով հետերնին կրնայ միանալ . և այս տեսակ երեսոյթը գոսկութանութեան կ'ըսուի : || յն մարմիններն որ այս յատկութիւնն ունին, թէ որ առաջ արեւուն ճառագայթից մէջը դըրուին՝ մութ տեղը լուսաւոր կ'երեան : Փոսուրայն, մեղուսայ լուսած ծովային կենդանին, քանի մը տեսակ ծովային խեցեմորթներ, ցանաքային կենդանաց ոսկերտափերը, ծովու ձկներու միուր . մարմարինը, փատած փայտը, տեսակ տեսակ հողային բաղադրութիւններ, զանազան աստիճան փոսփորականութեան կենդան կրնան ունենալ :

|| Սա այժմ ջերմութիւն անուանեցինք չէ տաքութիւնն որ կը զգանք, հապա այս տաքութեան զգացման պատճառը, մինչ որ մեր ուսումնականք միաբանին թէ Calorique կամ Calorico եւրոպական բառին տեղ ինչ պէտք է գնենք . Արմէիս կամ ջէրմութիւնը բաելը գուցէ անտեղի չէ . Ջէրմէիս չենք ըսեր, որովէտակ ուրիշ գաղափար բացատրելու գործածուած է :

¹ Առ այժմ ջերմութիւն անուանեցինք չէ տաքութիւնն որ կը զգանք, հապա այս տաքութեան զգացման պատճառը, մինչ որ մեր ուսումնականք միաբանին թէ Calorique կամ Calorico եւրոպական բառին տեղ ինչ պէտք է գնենք . Արմէիս կամ ջէրմութիւնը բաելը գուցէ անտեղի չէ . Ջէրմէիս չենք ըսեր, որովէտակ ուրիշ գաղափար բացատրելու գործածուած է :